<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԼՄՀՆԴ-ՄԱ-Տպարան-18/06>>

ք. Վանաձոր «30» մարտի 2018թ.

Գ.Ս.Քալանթարյանը ի դեմս <<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Հարինգ>> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Կ.Ծատուրյանի, որը գործում է ընկերությամ կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված տպագրական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝

ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 407 235 /չորս հարյուր յոթ հազար երկու հարյուր երեսունհինգ/ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.1 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է << դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական-ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը

և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք)

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[3]:

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու

օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ	<<Հարինգ>>ՍՊԸ
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ-ղ	<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570015001210100	Հ/Հ 2050222016071002
ՀՎՀՀ 06902087	ՀՎՀՀ 06937776
Տնօրեն՝ Գ.Ս.Քալանթարյան	Տնօրեն՝ Կ.Ծատուրյան

Հավելված N 3

«30» մարտի 2018թ. կնքված

<<ԼՄՀՆԴ-ՄԱ-ԱՎՏ-18/06>>ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները ՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

«22» մարտի 2018թ. կնքված

<<ԼՄՀՆԴ-ՄԱ-ԱՎՏ-18/09>>ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ <<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և <<Հարինգ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2018թ. մարտի 30-ին կնքված N *<<ԼՄՀՆԴ-ՄԱ-ԱՎՏ-18/06>>* պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2018թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն

Հավելված N 1
<<30>> մարտի 2018թ. կնքված
<<ԼՄՀՆԴ-ՄԱ-Տպարան-18/06>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

ԱՇԽԱՏԱՆՔԻ									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման	
								ենթակա առավելագույն քանակը	ժամկետը
1	22451240	Պահանջագիր A5 2 կողմ.	Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/ սահմանված ձևի	հատ	3,5	1050	300	300	2018թ. 3-րդ ամիս
2	22451240	Պահանջագիր A4 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	6	1800	300	300	2018թ. 3-րդ ամիս
3	22451240	Վիճակ. քարտ ստաց. A4 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	6	1800	300	300	2018թ. 4-րդ և 6-րդ ամիսներ
4	22451240	Ստուգիչ քարտ A4 2երես ստվարաթ.	Երկկողմանի տպագրված, ստվարաթղթե սահմանված ձևի	հատ	60	12000	200	200	2018թ. 3-րդ, 5-րդ և 9-րդ ամիսներ
5	22451240	Վիճակ. քարտ ամբ. A5 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	3	750	250	250	2018թ. 3-րդ ամիս
6	22451240	Ուղեգիր լաբոր. A4 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	6	1800	300	300	2018թ. 5-րդ ամիս
7	22451240	Թերթիկ ջերմ.A4 2կողմ.	Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/ սահմանված ձևի	հատ	7	2800	400	400	2018թ. 3-րդ, 5-րդ, 8-րդ և 10-րդ ամիսներ
8	22451240	Մահճակ. ֆոնդ A4 2կողմ.	Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/ սահմանված ձևի	հատ	7	2800	400	400	2018թ. 3-րդ, 5-րդ, 8-րդ և 10-րդ ամիսներ

9	22451240	Թերթիկ իրազեկման A4 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	6,5	3250	500	500	2018թ. 4-րդ, 7-րդ, 10-րդ և 11-րդ ամիսներ
10	22451240	Քաղվածքի ձև A4 2կողմ.	Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/ սահմանված ձևի	հատ	8	2400	300	300	2018թ. 3-րդ ամիս
11	22451240	Թերթիկ վարորդի սթափ. A4 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	7	700	100	100	2018թ. 5-րդ ամիս
12	22451240	Դիմումի ձև ամբ. A5 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	4	600	150	150	2018թ. 6-րդ ամիս
13	22451240	Դիմումի ձև հիվ. A5 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	4	800	200	200	2018թ. 3-րդ ամիս
14	22451240	Տեղեկանք A5 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	3,5	8750	2500	2500	2018թ. 4-րդ, 6-րդ, 9-րդ և 11-րդ ամիսներ
15	22451240	Թերթիկ ճշտված ախտ. A6 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	1	300	300	300	2018թ. 3-րդ ամիս
16	22451240	Ուղեգիր հիվ. A5 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	4	480	120	120	2018թ. 5-րդ ամիս
17	22451240	Ժամանակատախտ. ձև,ամբ. A3 2կողմ.	Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/ սահմանված ձևի	հատ	25	625	25	25	2018թ. 4-րդ ամիս
18	22451240	Ժամանակատախտ. ձև,հիվ. A3 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	15	600	40	40	2018թ. 4-րդ ամիս
19	22451240	Ժամանակացույց հիվ. A3 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	15	300	20	20	2018թ. 8-րդ ամիս
20	22451240	Դեղատոմս համար. A5 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	6,5	39000	6000	6000	2018թ. 3-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ ամիսներ
21	22451240	Դեղատոմս համար. A5 2կողմ.	Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/ սահմանված ձևի	հատ	7,5	30000	4000	4000	2018թ. 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ ամիսներ
22	22451240	Սնկետա 15թ.	Սահմանված ձևի, ստվարաթղթե կազմով, Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/	հատ	120	12000	100	100	2018թ. 4-րդ, 6-րդ, 9-րդ և 11-րդ ամիսներ

23	22451240	Անկետայի միջուկ A3	Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/ սահմանված ձևի	հատ	20	30000	1500	1500	2018թ. 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ ամիսներ
24	22451240	Թերթիկ մեզի քնն. A6 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	1	500	500	500	2018թ. 3-րդ ամիս
25	22451240	Թերթիկ արյան քնն. A6 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	1	500	500	500	2018թ. 3-րդ ամիս
26	22451240	Պատվիրաթերթ A5 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	3,5	700	200	200	2018թ. 6-րդ ամիս
27	22451240	ՄՓԲ ստացող հիվանդի նշ. թերթիկ A4 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	6	2400	400	400	2018թ. 4-րդ և 8-րդ ամիսներ
28	22451240	Հիվանդ. բժշկ. ծառ. հաշմառման ձև, A4 2կողմ.	Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/ սահմանված ձևի	հատ	7,5	3000	400	400	2018թ. 3-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ ամիսներ
29	22451240	Կտրոն A8 2կողմ.	Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/ սահմանված ձևի	հատ	1,2	20400	17000	17000	2018թ. 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ ամիսներ
30	22451240	Դրամարկղի օրդեր /ելքի և մուտքի/	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով, սահմանված ձևի	տրցակ	300	4200	14	14	2018թ. 4-րդ և 7-րդ ամիսներ
31	22451240	Մեմորիալ օրդեր A5 1 կողմ	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով սահմանված ձևի	տրցակ	300	600	2	2	2018թ. 8-րդ ամիս
32	22451240	Դեղ. հաշվետվ. ձև հիվ., A4 2կողմ.	Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/ սահմանված ձևի	հատ	8	440	55	55	2018թ. 4-րդ ամիս
33	22451240	Դեղորայքի հաշվետվ. ձև, A4 2կողմ.	Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/ սահմանված ձևի	հատ	8	240	30	30	2018թ. 4-րդ ամիս
34	22451240	Բլանկ դրոշմ. A4 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	6,5	22750	3500	3500	2018թ. 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ ամիսներ
35	39263200	Պատմագիր հիվանդ., 12թերթ	Երկկողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ2/ սահմանված ձևի	հատ	220	52800	240	240	2018թ. 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ ամիսներ

36	39263200	Մատյան նյութ. հաշվառման, 100թերթ	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. ստվարաթղթե կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	900	2700	3	3	2018թ. 4-րդ, 5-րդ և 9-րդ ամիսներ
37	39263200	Մատյան ելիցի կարած, 100թ.	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. ստվարաթղթե կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	900	900	1	1	2018թ. 7-րդ ամիս
38	39263200	Մատյան մտիցի կարած, 80թ.	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. ստվարաթղթե կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	700	700	1	1	2018թ. 7-րդ ամիս
39	39263200	Մատյան կարած, 100թ.	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. ստվարաթղթե կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	900	9000	10	10	2018թ. 9-րդ ամիս
40	39263200	Մատյան կարած, 150թ.	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. ստվարաթղթե կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	1300	19500	15	15	2018թ. 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ ամիսներ
41	39263200	Մատյան կարած կոշտ կազմ, 100թ.	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. կոշտ կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	3000	3000	1	1	2018թ. 8-րդ ամիս

42	39263200	Գիրք աշխատավարձի	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. կոշտ կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	800	800	1	1	2018թ. 11-րդ ամիս
43	39263200	Գրասենյակային գիրք, 70թ.	Գրասենյակային գիրք: A4 ձևաչափի(210X297 մմ), օֆսեթային թղթից, խտությունը 45-50գ/ք.մ./, սպիտակությունը ոչ պակաս քան 70%, ստվարաթղթե կազմով, 70 թերթ:	հատ	500	10000	20	20	2018թ. 3-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ ամիսներ
44	30197232	Արագակար թղթե	Սովորական, լավ որակի	հատ	70	3500	50	50	2018թ. 4-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ ամիսներ
45	39263200	Գիրք սննդի հաշվառման, 100 էջ	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. ստվարաթղթե կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	900	900	1	1	2018թ. 11-րդ ամիս
46	79521100	Պատճենահանում A4	Սովորական պատճենահանում	հատ	9	8100	900	900	2018թ. 3-րդից 11-րդ ամիսներ
47	79521100	Պատճենահանում A3	Սովորական պատճենահանում	հատ	18	3600	200	200	2018թ. 4-րդ, 6-րդ և 8-րդ ամիսներ
48	39263200	Գիրք հաշվառման, 150էջ, կարած	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. ստվարաթղթե կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	1300	7800	6	6	2018թ. 5-րդ, 7-րդ և 9-րդ ամիսներ
49	39263200	Գիրք տաբելի, 24 թերթ,	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. կոշտ կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով, կարած:	հատ	1500	3000	2	2	2018թ. 11-րդ ամիս

50	39263200	Մատյան սննդի որակի հսկող., 100 էջ	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. ստվարաթղթե կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	900	2700	3	3	2018թ. 5-րդ, 7-րդ և 9-րդ ամիսներ
51	39263200	Մատյան բժշկ. դեղատոմսերի հաշվառման, 100 էջ, կարած	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. ստվարաթղթե կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	900	5400	6	6	2018թ. 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 10-րդ ամիսներ
52	39263200	Գիրք հիվանդների հաճախ. հաշվառման, 100 էջ, կարած	A4 ձևաչափի, օֆսեթային թղթից, երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/ք.մ. ստվարաթղթե կազմով 800գ/ք.մ, մետաղակար, սոսնձված, կողքի մասի լիդերինապատումով:	հատ	900	3600	4	4	2018թ. 3-րդ, 6-րդ և 9-րդ ամիսներ
53	50321200	Քարթրիջների լիցքավորում,վերանորոգում	Սահմանված պահանջներին համապատասխան	հատ	3500	52500	15	15	2018թ. 3-րդից 11-րդ ամիսներ
54	22451240	Մենյու-պահանջագիր A4 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	8	3200	400	400	2018թ. 4-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ ամիսներ
55	22451240	Պահանջագիր հիվ. քանակի A8 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	2	800	400	400	2018թ. 3-րդ ամիս
56	22451240	Կտրոն վճարման A7 1կողմ.	Միակողմանի տպագրված, օֆսեթային թղթով՝/80գ/մ^2/ սահմանված ձևի	հատ	2	400	200	200	2018թ. 3-րդ ամիս
57	22451241	Մատենավարական ցուցանակի պատրաստում	Երկկողմանի, ամուր ստվարաթղթից, տակդիրով	հատ	2000	2000	1	1	2018թ. 3-րդ ամիս
					Ընդամենը՝	**407235**			

1. Ապրանքը չպետք է լինի օգտագործված: Մատակարարը իր ուժերով և միջոցներով պետք է ապահովի ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը:

2. Մատակարարումը իրականացվում է ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող քանակների և մատակարարման ժամկետների, նկատի ունենալով, որ մատակարարման առաջին պատվերի տրամադրման և մատակարարման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող պակաս լինել 30 աշխատանքային օրից, եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարումն իրականացնել ավելի կարճ ժամկետում: Ընդ որում հաջորդող պատվերների մատակարարումներն իրականացվում են պատվերի ներկայացմանը հաջորդող 2 օրվա ընթացքում: Պայմանագիրը գործելու է մինչև 2018թ. դեկտեմբերի 20-ը: Մատակարարման վայրը՝ ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57:

3. Ապրանքի վրա պարտադիր պետք է առկա լինի ֆիրմայի նշանը:

Ընդամենը՝ Չորս հարյուր յոթ հազար երկու հարյուր երեսունհինգ դրամ:

ԳՆՈՐԴ
«ԼՄՀՆԴ» ՊՓԲԸ
ք. Վանաձոր, Գ.Նժդեհի 57
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»
Հ/Հ 1570015001210100
ՀՎՀՀ 06902087
Տնօրեն՝ Գ.Ս.Քալանթարյան

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Հարինգ» ՍՊԸ
ք.Վանաձոր, Տ.Մեծի 22
«Ինեկոբանկ» ՓԲԸ,Վանաձոր մ-ղ
Հ/Հ2050222016071002
ՀՎՀՀ 06937776
Տնօրեն՝ Կ.Ծատուրյան

Կ.Տ

Հավելված N 2

<<30>> մարտի 2018թ. կնքված

<<ԼՄՀՆԴ-ՄԱ-Տպարան- 18-06 >> ծածկագրով պայմանագ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի									
			Վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում									
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	Ընդամենը
1	22451240	Պահանջագիր A5 2 կողմ.	1050	1050	1050	1050	1050	1050	1050	1050	1050	1050
2	22451240	Պահանջագիր A4 1կողմ.	1800	1800	1800	1800	1800	1800	1800	1800	1800	1800
3	22451240	Վիճակ. քարտ ստաց. A4 1կողմ.		900	900	1800	1800	1800	1800	1800	1800	1800
4	22451240	Ստուգիչ քարտ A4 2երես ստվարաթ.	4000	4000	4000	8000	8000	8000	12000	12000	12000	12000
5	22451240	Վիճակ. քարտ ամբ. A5 1կողմ.	750	750	750	750	750	750	750	750	750	750
6	22451240	Ուղեգիր լաբոր. A4 1կողմ.			1800	1800	1800	1800	1800	1800	1800	1800
7	22451240	Թերթիկ ջերմ.A4 2կողմ.	700	700	1400	1400	1400	2100	2100	2800	2800	2800
8	22451240	Մահճակ. ֆոնդ A4 2կողմ.	700	700	1400	1400	1400	2100	2100	2800	2800	2800
9	22451240	Թերթիկ իրազեկման A4 1կողմ.		650	650	1300	1300	2600	2600	3250	3250	3250
10	22451240	Քաղվածքի ձև A4 2կողմ.	2400	2400	2400	2400	2400	2400	2400	2400	2400	2400
11	22451240	Թերթիկ վարորդի սթափ. A4 1կողմ.			700	700	700	700	700	700	700	700
12	22451240	Դիմումի ձև ամբ. A5 1կողմ.				600	600	600	600	600	600	600
13	22451240	Դիմումի ձև հիվ. A5 1կողմ.	800	800	800	800	800	800	800	800	800	800
14	22451240	Տեղեկանք A5 1կողմ.		1750	1750	3500	3500	7000	7000	8750	8750	8750
15	22451240	Թերթիկ ճշտված ախտ. A6 1կողմ.	300	300	300	300	300	300	300	300	300	300
16	22451240	Ուղեգիր հիվ. A5 1կողմ.			480	480	480	480	480	480	480	480

17	22451240	Ժամանակատախտ. ձև,ամբ. A3 2կողմ.		625	625	625	625	625	625	625	625	625
18	22451240	Ժամանակատախտ. ձև,հիվ. A3 1կողմ.		600	600	600	600	600	600	600	600	600
19	22451240	Ժամանակացույց հիվ. A3 1կողմ.						300	300	300	300	300
20	22451240	Դեղատոմս համար. A5 1կողմ.	6500	6500	13000	19500	26000	26000	32500	39000	39000	39000
21	22451240	Դեղատոմս համար. A5 2կողմ.		5000	5000	10000	15000	20000	25000	30000	30000	30000
22	22451240	Անկետա 15թ.		3000	3000	6000	6000	9000	9000	12000	12000	12000
23	22451240	Անկետայի միջուկ A3	5000	5000	10000	15000	20000	20000	25000	30000	30000	30000
24	22451240	Թերթիկ մեզի քնն. A6 1կողմ.	500	500	500	500	500	500	500	500	500	500
25	22451240	Թերթիկ արյան քնն. A6 1կողմ.	500	500	500	500	500	500	500	500	500	500
26	22451240	Պատվիրաթերթ A5 1կողմ.				700	700	700	700	700	700	700
27	22451240	ՄՓԲ ստացող հիվանդի նշ. թերթիկ A4 1կողմ.		1200	1200	1200	1200	2400	2400	2400	2400	2400
28	22451240	Հիվանդ. բժշկ. ծառ. հաշմառման ձև, A4 2կողմ.	500	500	1000	1000	1500	2000	2500	3000	3000	3000
29	22451240	Կտրոն A8 2կողմ.		2550	5100	7650	10200	12750	15300	17850	20400	20400
30	22451240	Դրամարկղի օրդեր /ելքի և մուտքի/		2100	2100	2100	4200	4200	4200	4200	4200	4200
31	22451240	Մեմորիալ օրդեր A5 1 կողմ						600	600	600	600	600
32	22451240	Դեղ. հաշվետվ. ձև հիվ., A4 2կողմ.		440	440	440	440	440	440	440	440	440
33	22451240	Դեղորայքի հաշվետվ. ձև, A4 2կողմ.		240	240	240	240	240	240	240	240	240
34	22451240	Բլանկ դրոշմ. A4 1կողմ.	2750	5250	7750	10000	12250	15250	17750	20250	22750	22750
35	39263200	Պատմագիր հիվանդ., 12թերթ	4800	10800	16800	22800	30800	36800	42800	50800	52800	52800
36	39263200	Մատյան նյութ. հաշվառման, 100թերթ		900	900	1800	1800	1800	2700	2700	2700	2700
37	39263200	Մատյան ելիցի կարած, 100թ.					900	900	900	900	900	900
38	39263200	Մատյան մտիցի կարած, 80թ.					700	700	700	700	700	700
39	39263200	Մատյան կարած, 100թ.							9000	9000	9000	9000
40	39263200	Մատյան կարած, 150թ.	2600	3900	7800	7800	13000	13000	19500	19500	19500	19500
41	39263200	Մատյան կարած կոշտ կազմ, 100թ.						3000	3000	3000	3000	3000
42	39263200	Գիրք աշխատավարձի									800	800

43	39263200	Գրասենյակային գիրք, 70թ.	2000	2000	4000	4000	8000	8000	10000	10000	10000	10000
44	30197232	Արագակար թղթե		700	700	1400	1400	2800	2800	3500	3500	3500
45	39263200	Գիրք սննդի հաշվառման, 100 էջ									900	900
46	79521100	Պատճենահանում A4	900	1800	2700	3600	4500	5400	6300	7200	8100	8100
47	79521100	Պատճենահանում A3		1200	1200	2400	2400	3600	3600	3600	3600	3600
48	39263200	Գիրք հաշվառման, 150էջ, կարած			2600	2600	5200	5200	7800	7800	7800	7800
49	39263200	Գիրք տաբելի, 24 թերթ,									3000	3000
50	39263200	Մատյան սննդի որակի հսկող., 100 էջ			900	900	1800	1800	2700	2700	2700	2700
51	39263200	Մատյան բժշկ. դեղատոմսերի հաշվառման, 100 էջ, կարած	600	600	2400	2400	3600	3600	4200	5400	5400	5400
52	39263200	Գիրք հիվանդների հաճախ. հաշվառման, 100 էջ, կարած	1200	1200	1200	2400	2400	2400	3600	3600	3600	3600
53	50321200	Քարթրիջների լիցքավորում,վերանորոգում	3500	7000	14000	17500	24500	31500	38500	45500	52500	52500
54	22451240	Մենյու-պահանջագիր A4 1կողմ.		800	800	1600	1600	2400	2400	3200	3200	3200
55	22451240	Պահանջագիր հիվ. քանակի A8 1կողմ.	800	800	800	800	800	800	800	800	800	800
56	22451240	Կտրոն վճարման A7 1կողմ.	400	400	400	400	400	400	400	400	400	400
57	22451241	Մատենավարական ցուցանակի պատրաստում	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000
			47050	83905	130435	178535	233835	276485	340135	387585	407235	407235

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Ընդամենը՝ Չորս հարյուր յոթ հազար երկու հարյուր երեսունհինգ դրամ:

Գ Ն Ո Ր Դ

«ԼՄՀՆԴ» ՊՓԲԸ

ք. Վանաձոր, Գ.Նժդեհի 57

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ,Վանաձոր մ-ղ

Հ/Հ 1570015001210100

ՀՎՀՀ 06902087

Տնօրեն՝ Գ.Ս.Քալանթարյան

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Հարինգ» ՍՊԸ

ք.Վանաձոր, Տ.Մեծի 22

«Ինեկոբանկ» ՓԲԸ,Վանաձոր մ-ղ

Հ/Հ2050222016071002

ՀՎՀՀ 06937776

Տնօրեն՝ Կ.Ծատուրյան

Կ.Տ